

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ

Հրանտ Զիլավյան

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար

Քրեական դատավարության նոր օրենսգրքի (այսուհետ նաև՝ նոր Օրենսգրք) մշակման անհրաժեշտությունը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է եղել նաև խափանման միջոցների կիրառումը կարգավորող կանոնների կատարելագործման անհրաժեշտությամբ¹: Դեռևս քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում հիմնավորվել է նաև ընդհանուր առմամբ խափանման միջոցների շրջանակի ընդլայնման և դրանց օպտիմալացման անհրաժեշտությունը²: Նոր օրենսգրքով խափանման միջոցների շրջանակի ընդլայնումը և դրանց կիրառման ընթացակարգերի հստակեցումը մի կողմից պայմանավորված են եղել կալանքի համար այլընտրանքային խափանման միջոցների գործունե համակարգի բացակայությամբ և դրանով պայմանավորված խափանման միջոցների կիրառման շրջանակում կալանքի գերակա դիրքին և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեադատավարական նորմերի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) պահանջներին համապատասխանեցնելու հանգամանքով: Այսպիսով, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ներպետական իշխանությունները անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս պետք է *վինտրեն նաև այլընտրանքային միջոցներ*, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը³,
- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ *այլ միջոցներով* հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը⁴,
- Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը ամրագրում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կամ մինչև դատաքննությունն ազատ ար-

¹ Տե՛ս **Դ. Մելքոնյան**, «խափանման միջոցների կիրառման առանձնահատկությունները ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի», Պետություն և իրավունք, Երևան 2013, էջ 59:

² Տե՛ս Հայեցակարգ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի: Պատրաստվել է ՀՀ նախագահի կարգադրությամբ ստեղծված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող հանձնաժողովի ձևավորած աշխատանքային խմբի կողմից, Երևան, 2011:

³ Տե՛ս *Idalov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:

⁴ Տե՛ս, *mutatis mutandis, Sahin Alpaz v. Turkey* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:

ծակվելու իրավունքը», այլ նաև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»¹:

Ավելին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ հանձնարարականի 9-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի կիրառման դեպքում դատարանը պետք է քննարկի, թե արդյոք այլընտրանքային միջոցներով կարելի է խուսափել կալանքի կիրառումից²:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ կալանքի ոչ հիմնավոր կիրառումից խուսափելու նպատակով պետք է նախատեսվի այլընտրանքային միջոցների հնարավորինս լայն շրջանակ, առավել քիչ սահմանափակումների կիրառմամբ՝ հաշվի առնելով հանցանքի կատարման մեջ կասկածվողի վարքագիծը: Նույն հանձնարարականի 7-րդ կետի «c» ենթակետի համաձայն՝ անձը կարող է պահվել կալանքի տակ, եթե փախուստի դիմելու, ծանր հանցանք կատարելու, արդարադատության իրականացմանը միջամտելու կամ հասարակական կարգի պահպանությանը լուրջ սպառնալիք ներկայացնելու վերաբերյալ ենթադրությունները չեն կարող փարատվել այլընտրանքային միջոցների կիրառմամբ³:

Այսպիսով, Եվրոպական դատարանի, ԵՍ Նախարարների կոմիտեի վերոշարադրյալ դիրքորոշումների հաշվառմամբ և ներպետական օրենսդրությունը Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու անհարժաշտությունից ելնելով էլ նոր օրենսգրքով բավականին ընդլայնվեցին այլընտրանքային խափանման միջոցների շրջանակը՝ դրանց շարքում ընդգրկվելով այնպիսի նոր տեսակի խափանման միջոցներ, ինչպիսիք են տնային կալանքը և վարչական հսկողությունը, որոնք իրենց կիրառման արդյունքում ենթադրվող սահմանափակումներով և դրանց կիրառման առանձնահատկություններով իրապես կարող են կալանքին հանդիսանալ այլընտրանքային միջոց՝ դրանց կիրառմամբ երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը, այդ թվում՝ ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը:

Այսպիսով, սույն հոդվածի շրջանակում քննարկման առարկա դարձնելով հատկապես վարչական հսկողությունը՝ որպես ինքնուրույն այլընտրանքային խափանման միջոց, փորձենք վեր հանել քրեական դատավարության նոր օրենսգրքով վերջինիս տրված բովանդակությունը և այն համեմատական վերլուծության ենթարկենք ինչպես այլ երկրների համանման կարգավորումների, այնպես էլ նոր Օրենսգրքով սահմանված մյուս այլընտրանքային խափանման միջոցների հետ:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցներ են կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես այլընտրանքային խափանման միջոց սահմանվում է նաև վարչական հսկողությունը: Նոր օրենսգրքի 124-րդ հոդվածը արդեն սահմանում է, որ Վարչական հսկողությունը մեղադրյալի **տեղաշարժման և գործողությունների** ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք

¹ Տե՛ս Khudoyorov v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետ:

² Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ 1980 թվականի հունիսի 27-ի թիվ R(80)11 հանձնարարականը:

³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված կալանքի կիրառման, դրա համար անհրաժեշտ պայմանների և չարաշահումներից պաշտպանության երաշխիքների վերաբերյալ 2006 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ (2006)13 հանձնարարականը:

անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված վայրի իրավասու մարմնում: Նշվածից հետևում է, որ վարչական հսկողությունը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց, ի տարբերություն կալանքի կամ տնային կալանքի, ենթադրում է ոչ թե անձի ազատության սահմանափակում, այլ առավելապես ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում: Այսինքն, նման պարագայում վերջինս թեև չի զրկվում այս կամ վայր այցելելու հնարավորությունից, բայց նշված օրերին իրավասու մարմին ներակայանալու պարտականությունը նրան զրկում է առնվազն այդ ժամանակ այլ վայրում գտնվելու կամ այլ գործողություններ կատարելու հնարավորությունից: Այսինքն՝ այս խափանման միջոցը կոչված է առավելապես անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմանը և այդ կերպ անձի՝ պատշաճ վարքագիծ դրսևորելուն հարկադրելուն: Մինևույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև կատարել որոշակի այլ գործողություններ ևս, մասնավորապես՝ 1) առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը, 2) այցելել որոշման մեջ նշված որոշակի վայրեր, 3) հաղորդակցվել որոշակի անձանց հետ, 4) օրվա որոշակի ժամերի լքել իր բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը:

Նշված 124-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համադրությունից հետևում է, որ վարչական հսկողության՝ որպես այլընտրանքայի խափանման միջոցի հիմնական բովանդակությունը մեղադրյալի տեղաշարժի և գործողությունների ազատության սահմանափակումն է, մինևույն ժամանակ, օրենսդիրը դատարանին հնարավորություն է տվել մեղադրյալի՝ 124 հոդվածի 1-ին մասում տեղ գտած պարտականությունից բացի՝ սահմանել նաև լրացուցիչ այլ պարտականություններ՝ խափանման միջոցի առջև դրված խնդիրները առավել արդյունավետ իրագործելու նապատակով: Անդրադառնալով դատական ակտով արգելվող գործողություններին՝ հարկ է նկատել, որ օրենսդիրը սահմանել է արգելքների այդպիսի սահմանափակ շրջանակ, և դատարանը այդ շրջանակից դուրս այլ սահմանափակում չի կարող նախատեսել վարչական հսկողության շրջանակում:

Ինչպես վերը նշվեց, դատարանը կարող է մեղադրյալին արգելել առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը: Այս կարգավորումից առաջին հայացքից կարող է հետևել, որ օրենսդիրը ցանկացել է սահմանափակել մեղադրյալի բնակության ցանկացած վայրի փոփոխությունը՝ մշտական կամ ժամանակավոր: Սակայն, օրենսգրքով ընդհանրապես բացահայտված չէ, թե որն է բնակության վայրը՝ հիմնական կամ ժամանակավոր: Ավելին, օրենսդիրը «բնակության վայր» հասկացությունը օգտագործում է նաև 123 հոդվածի 2-րդ մասում՝ տնային կալանքին վերաբերող կարգավորման շրջանակում, որով արգելվում է տնային կալանքի դեպքում բնակության վայրում այլ անձանց հյուրընկալել: Այսինքն, նման ձևակերպման պարագայում կարող է շփոթ առաջանալ, որ բնակության վայրի յուրաքանչյուր փոփոխության դեպքում մեղադրյալը պետք է նախապես ստանա վարույթն իրականացնողի համաձայնությունը: Մինչդեռ վերոնշյալ 124-րդ հոդվածի համատեքստում օրենսդիրը բնակության վայր եզրույթի բովանդակության ներքո նկատի է ունեցել համայնքը կամ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը: Այսինքն՝ նշված հոդվածի իմաստով դատարանը կարող է մեղադրյալի համար լրացուցիչ պարտականություն սահմանել ոչ թե ցանկացած դեպքում մշտական կամ ժամանակավոր բնակության վայրի փոփոխության դեպքում վարույթն իրականացնողից թույլտվություն վերցնելու մասով, այլ բնակության վայրի այնպիսի փոփոխության դեպքում, որը կարող է հանգեցնել համայնքի կամ Երևան քաղաքում վարչական շրջանի փոփոխության:

Վարչական հսկողության շրջանակում դատարանի կողմից սահմանվող հա-

ջորդ լրացուցիչ արգելքը վերաբերում է դատարանի որոշման մեջ նշված **որոշակի** վայրեր այցելելուն: Կարգավորման բովանդակությունից հետևում է, որ դատարանը իր որոշմամբ կարող է արգելել մեղադրյալին այցելել որոշակի վայրեր: Այս առումով հատկանշական է օրենսդրի կողմից «**որոշակի վայրեր**» արտահայտության օգտագործումը: Մեր կարծիքով, նման պահանջի ամրագրումը նախ ուղղված է դատարանին, որպեսզի վերջինս կայացվող դատական ակտով այդ վայրերը սահմանելիս ելնի որոշակիության պահանջից, այլ կերպ ասած՝ որոշմամբ հստակ սահմանի այն վարչական շրջանը կամ համայնքը, շինությունը, հասցեն կամ այն վայրը, որտեղ արգելվում է մեղադրյալին այցելել: Այդ հանգամանքներին օրենսդրի կողմից որոշակիության պահանջ ներկայացնելը, կարծում ենք, լիովին արդարացված է նախևառաջ այն պատճառով, որ դա առավել արդյունավետ կդարձնի վարչական հսկողության կրման պայմանների վերաբերյալ իրավասու մարմնի կողմից հսկողություն իրականացնելը: Մասնավորապես, Նոր օրենսգրքի 124-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հատուկ **էլեկտրոնային միջոցներով**: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցը, չվնասել այն, ինչպես նաև արձագանքել իրավասու մարմնի հսկողության ազդանշաններին: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ «Պրոբացիայի մասին» օրենսդրական կարգավորումների շրջանակներում դեռևս 2017 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ կառավարության թիվ 1440-Ն որոշմամբ սահմանվել է էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման կարգը: Այդ որոշման հավելվածի համաձայն՝ էլեկտրոնային հսկողություն կիրառելիս օգտագործվում է էլեկտրոնային հսկողության միջոցների երկու տեսակ՝ գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) աշխատող և ռադիոալիքային սարքավորումներ: Բնակության վայրը չլքելու հետ կապված խափանման միջոցների վերահսկման դեպքում օգտագործվում են ռադիոալիքային սարքավորումներ՝ անձնական նույնականացման սարքը և ֆիքսված վերահսկման սարքակազմը: Իսկ օրենքով սահմանված էլեկտրոնային հսկողության **այլ դեպքերում** օգտագործվում են տեղորոշման համակարգով աշխատող սարքավորումներ՝ անձնական նույնականացման և GPS արբանյակային վերահսկողության սարքերը: Եվ որպեսզի հսկողություն իրականացնողի մոտ տարընթերցումներ չլինեն, թե որ դեպքում մեղադրյալը խախտեց որոշակի վայրեր չայցելելու արգելքը, իսկ որ դեպքում ոչ, անհարժեշտ է դատարանի որոշմամբ հստակ սահմանել այն վայրերը, որտեղ արգելվում է մեղադրյալին գտվնել:

Դատական ակտում դրանով սահմանված վայրեր չայցելելու պահանջի՝ **որոշակիության** բարձր չափանիշի առկայությունը, գտնում ենք, արդարացված է նաև մեղադրյալի շահերի պաշտպանության տեսանկյունից, քանի որ վերջինս իրավունք ունի իրեն արգելված գործողությունների կամ այցելության վայրերի մասին ունենալ իրավական որոշակիության պահանջին համապատասխան ակտ, որպեսզի դրսևորի համապատասխան վարքագիծ, և դրանք չպահպանելու հետևանքները ևս իր համար կանխատեսելի լինեն: Ասվածի կարևորությունը նաև այն է, որ Նոր օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտության դեպքում իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում այլ՝ առավել պիտանի խափանման միջոց կիրառելու համար:

Դատարանի կողմից վարչական հսկողության շրջանակում սահմանվող հաջորդ լրացուցիչ արգելքը վերաբերում է որոշակի անձանց հետ հաղորդակցվելու արգելքին: Այսպես, հատկանշական է, որ այս առումով օրենսդիրը առավել լիբերալ մոտեցում է ցուցաբերել, և այս խափանման միջոցի կիրառման դեպքում որպես ընդհանուր կանոն օրենսդիրը սահմանել է հաղորդակցվելու ազատությունը, և այդ

կանոնից բացառություն կարող է լինել միայն դատարանի որոշման մեջ նշված անձանց հետ հաղորդակցումը: Այսինքն՝ հաղորդակցման արգելքը կտարածվի բացառապես դատարանի որոշման մեջ նշված անձանց նկատմամբ, իսկ դրանում չնշված ցանակացած անձի հետ մեղադրյալը կունենա ազատ հաղորդակցվելու իրավունք: Այս մոտեցումը, գտնում ենք, լիովին արդարացված է թե՛ այս խափանման միջոցի էության և թե՛ դրա առջև դրված խնդիրների առումով, այն է՝ անձնական ազատության առավել նվազ սահմանափակման և անձին հասարակությունից հնարավորինս քիչ մեկուսացման պայմաններում ապահովել մեղադրյալի իրավաչափ վարքագիծը:

Դատարանի կողմից վարչական հսկողության շրջանակում սահմանվող հաջորդ լրացուցիչ արգելքը վերաբերում է նրան, որ դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև օրվա որոշակի ժամերի լքել իր բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը: Այս սահմանափակման էությունը այն է, որ դատարանը կարող է օրական առավելագույնը 12 ժամ տևողությամբ արգելել մեղադրյալին լքել իր բնակության տարածքը: Միևնույն ժամանակ, դատարանը պետք է սահմանի օրվա այն որոշակի ժամերը, երբ մեղադրյալը չպետք է բնակության տարածքից դուրս գա: Բացի դա, դատարանը նշված արգելքները սահմանելիս պետք է հաշվի առնի *մեղադրյալի առողջական վիճակը, ինչպես նաև աշխատանքի և ուսման պայմանները*:

Անդրադառնալով այս խափանման միջոցի կիրառման որոշ հիմնախնդիրներին՝ հարկ ենք համարում անդրադառնալ դրա կիրառման հնարավոր դեպքերին: Նախ, պետք է ընդգծել, որ վարչական հսկողությունը որպես այլընտրանքային խափանման միջոց նախատեսելու օրենսդրական հիմնական նպատակը կալանավորման դեպքերի նվազեցումն է կամ այլ կերպ ասած՝ կալանքին այլընտրանք լինելը: Միևնույն ժամանակ, վարչական հսկողությունը խափանման միջոցների շարքում միջին դիրքում է, մի կողմից՝ ենթադրում է նվազ խիստ սահմանափակումներ՝ ի համեմատ տնային կալանքի և կալանքի, իսկ մյուս կողմից՝ առավել խիստ սահմանափակումներ՝ ի համեմատ գրավի, պաշտոնավարման կասեցման, բացակայելու արգելքի, երաշխավորության, դաստիարակչական հսկողության և զինվորական հսկողության: Դրանով պայմանավորված էլ վարչական հսկողությունը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց, կարող է կիրառվել դատարանի կողմից այն ժամանակ, երբ վերջինս կայացնում է Օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ քննիչի կողմից խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում: Այդ մասին է վկայում նաև այն, որ Նոր օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը կայացնում է միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում և հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել **առավել մեղմ** խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ: Մյուս դեպքում, ինչպես արդեն նշեցինք, վարչական հսկողությունը սահմանափակումների առումով մի շարք այլ խափանման միջոցներից առավել խիստ սահմանափակումներ է ենթադրում, հետևաբար, գտնում ենք, որ քննարկման առարկա պետք է դառնա այն հարցը, թե արդյոք վարչական հսկողությունը կարող է կիրառվել այն դեպքում, երբ մեղադրյալի նկատմամբ կիրառված առավել մեղմ խափանման միջոցը չի ապահովում վերջինիս պատշաճ վարքագիծը: Այսպիսով, Օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի *պայմանները*, վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտության դեպքում իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում այլ՝ **առավել պիտանի** խափանման միջոց կիրառելու համար: Նշված կարգավորման տառացի վերլուծությունից հետևում է, որ մեղադրյալի նկատմամբ պետք է կիրառված լինի որևէ խափանման միջոց, և վերջինս խախտի *կիրառված խափանման միջոցի պայմանները*: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում

խոսքը ոչ թե 116-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերի առկայության կամ դրանցով նախատեսված գործողությունների՝ մեղադրյալի փախուստի, մեղադրյալի կողմից հանցանք կատարելու փորձի կամ մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների չկատարման մասին է, այլ վերջինիս նկատմամբ նշանակված խափանման միջոցի պայմանները խախտելու մասին: Այսինքն՝ Օրենսգրքի 117 հոդվածից հետևում է, որ մեղադրյալի նկատմամբ պետք է նշանակված լինի որոշակի խափանման միջոց, որը կունենա որոշակի կրման պայմաններ, և դրանց խախտման դեպքում միայն իրավասու մարմինը միջոցներ ձեռնարկի առավել պիտանի խափանման միջոց կիրառելու համար:

Ինչպես վերը նշեցինք, վարչական հսկողությունը առավել խիստ խափանման միջոց է, քան գրավը, պաշտոնավարման կասեցումը, բացակայելու արգելքը, երաշխավորությունը, դաստիարակչական հսկողությունը և զինվորական հսկողությունը: Այսինքն՝ եթե խոսենք 117-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կարգով վարչական հսկողությունը որպես առավել պիտանի խափանման միջոց կիրառելու մասին, ապա անհրաժեշտ է, որ մեղադրյալը խախտի վարչական հսկողության համեմատ նվազ խիստ խափանման միջոցներից որևէ մեկի պայմանները: Միևնույն ժամանակ, Օրենսգրքի՝ այդ նվազ խիստ խափանման միջոցներին վերաբերող կարգավորումների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք որպես այդպիսին կրման *հատուկ պայմաններ* չունեն: Այլ կերպ ասած՝ այդ նվազ խիստ խափանման միջոցների օրենսդրական ձևակերպումից և բնորոշումից միանշանակ չէ, թե որոնք են այդ խափանման միջոցների կրման պայմանները, որոնք խախտելու դեպքում կգործի Օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումը: Մասնավորապես, թեև նոր օրենսգիրքը չի սահմանում «բացակայելու արգելքը» խափանման միջոցի հասկացությունը կամ դրա կիրառման *հատուկ* պայմանները, որոնք խախտելու դեպքում կարող է կիրառվել առավել պիտանի խափանման միջոց, այնուհանդերձ, ընդհանուր առմամբ հասկանալի է, որ նպատակը անձի կողմից << տարածքը լքելն արգելելն է:

Սեկ այլ՝ «Պաշտոնավարման կասեցումը» խափանման միջոցի դեպքում ևս դրա կրման պայմանները սահմանված չեն, այնուամենայնիվ, այս դեպքում էլ հասկանալի է, որ արգելվում է մեղադրյալին իր աշխատանքային պարտականությունները կամ պաշտոնական լիազորություններն իրականացնել: Նման կարգավորումների պայմաններում, գտնում ենք, որ բավականին խնդրահարույց է այն հարցը, թե որ դեպքում մեղադրյալը կարող է համարվել իր նկատմամբ **կիրառված խափանման միջոցի պայմանները** խախտած: Նախ, ինչպես արդեն իսկ նշեցինք, օրենսդրական ձևակերպումից հստակ չէ, թե վերջինս նկատի ունի Օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողությունների կատարման ռիսկը, թե՞ կիրառված կոնկրետ խափանման միջոցի կրման կոնկրետ պայման խախտելը: Ավելին, տվյալ դեպքում առավել մեղմ խափանման միջոցների օրենսդրական ձևակերպումը և դրանց պայմանները հստակ սահմանված չեն օրենսդրությամբ, և դրանց բովանդակության կամ պայմանների մասին հետևությունների կամ վերլուծությունների արդյունքում ենք միայն կարողանում հանգել որևէ ոչ միանշանակ կարծիքի: Ասվածի համատեքստում գտնում ենք, որ մեղադրյալի իրավունքների պաշտպանության տեսանկյունից այնքան էլ արդարացված չէ մեղադրյալին <<մեղսագրել>> խափանման միջոցի պայմանները խախտելը այն դեպքում, երբ արգելված գործողությունների շրջանակը իրավական որոշակիության չափանիշին չի համապատասխանում, և մեղադրյալի համար կանխատեսելի չեն այն պայմանները, որոնք խախտելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել առավել խիստ խափանման միջոց:

Իրավիճակն այլ է տնային կալանքի և վարչական հսկողության դեպքում, երբ Օրենսգրքը սահմանում է դրանց պայմանները: Մասնավորապես վարչական հսկողության դեպքում սահմանվում է մեղադրյալի պարտականությունը՝ որոշակի

պարբերականությամբ ներկայանալ հսկողություն իրականացնող մարմին և այլն: Այսինքն, տվյալ դեպքում մեղադրյալի համար կանխատեսելի և որոշակի է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները և դրանք խախտելու դեպքում անբարենպաստ հետևանքները:

Այսպիսով, վերոշարադրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ տվյալ դեպքում վարչական հսկողությունը չի կարող կիրառվել Օրենսգրքի 117-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման կիրառման արդյունքում որպես առավել պիտանի խափանման միջոց:

Բացի այդ, եթե նույնիսկ առաջնորդվենք այն կանխավարկածով, որ օրենսդիրը 117-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված կարգավորմամբ նկատի է ունեցել ոչ թե կոնկրետ խափանման միջոցի պայմանները, այլ ընդհանրապես խափանման միջոցի ընտրության համար օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված գործողությունների կատարումը կամ կատարման փորձը, ապա այդ դեպքում ևս գտնում ենք, որ վարչական հսկողությունը չի կարող հանդիսանալ առավել պիտանի խափանման միջոց, քանի որ այդ դեպքում վերջինիս կողմից ենթադրվող սահմանափակումները և դրանց նկատմամբ հսկողությունը չեն կարող արդյունավետ կերպով չեզոքացնել օրինակ՝ փախուստը կամ հանցանք կատարելը կանխելու հնարավոր ռիսկը, հատկապես եթե կիրառված խափանման միջոցի պայմաններում մեղադրյալը արդեն նման գործողությունների կատարման փորձ իրականացրած լինի: Այսինքն՝ ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք փաստել, որ վարչական հսկողությունը որպես այլընտրանքային խափանման միջոց կարող է կիրառվել այն դեպքում, երբ քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը դատարանը բավարարում է և կայացնում է վարչական հսկողությունը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում, կամ այն դեպքում, երբ դատարանը մասնակի կբավարարի քննիչի միջնորդությունը՝ կալանքը կամ տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին և կնշանակի առավել մեղմ տեսակի խափանման միջոց՝ վարչական հսկողությունը: Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ այս խափանման միջոցը չի կարող կիրառվել որպես առավել պիտանի խափանման միջոց այն դեպքերում, երբ մեղադրյալը խախտել է իր նկատմամբ նշանակված խափանման միջոցի պայմանները:

Շարունակելով քննարկել վարչական հսկողության կիրառման հիմնախնդիրները, հարկ ենք համարում անդրադառնալ նաև վարչական հսկողությունը կիրառելու մասին քննիչի միջնորդության քննարկման արդյունքում դատարանի՝ միջնորդությամբ չներառված լրացուցիչ արգելքների կիրառման հարցին: Մասնավորապես անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հանգամանքը, թե արդյոք դատարանը կարող է դուրս գալ քննիչի միջնորդության սահմաններից և նախատեսել Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված, սակայն քննիչի կողմից չմիջնորդված լրացուցիչ արգելքներ: Այսպես, Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև 1) առանց վարույթի իրականացնող մարմնի թույլտվության փոխել մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը՝ համայնքը, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջանը, 2) այցելել որոշման մեջ նշված որոշակի վայրեր, 3) հաղորդակցվել որոշակի անձանց հետ և 4) օրվա որոշակի ժամերի լքել իր բնակության տարածքը, սակայն ոչ ավելի, քան 12 ժամը: Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ դատարանը կայացնում է խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում այն դեպքում, երբ հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կամ խափանման միջոցների համակցության կիրառմամբ, կամ երբ հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել միջնորդված խափանման միջոցի առավել մեղմ պայմաններով կիրառմամբ (առավել կարճ ժամկետով կամ մեղադրյալի հա-

մար առավել բարենպաստ պայմաններով): Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ դատարանը կարող է քննիչի միջնորդությունը բավարարել մասնակիորեն և մեղադրյալի նկատմամբ նշանակել կա՛մ առավել մեղմ խափանման միջոց, *կա՛մ միջնորդավորված խափանման միջոցը փոխել առավել մեղմ պայմաններով*: Այլ կերպ ասած, օրենսգիրքը հնարավորություն է տալիս դատարանին դուրս գալ ներկայացված միջնորդության սահմաններից մեղմացման առումով և մեղադրյալի համար առավել բարենպաստ պայմաններով սահմանել կա՛մ մեղմ տեսակի խափանման միջոց, կա՛մ միջնորդության մեջ նշվածը՝ առավել մեղմ պայմաններով: Վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության դեպքում դատարանը կարող է մասնակի բավարարել քննիչի միջնորդությունը և չկիրառել միջնորդությամբ ակնկալվող բոլոր լրացուցիչ արգելքները մեղադրյալի նկատմամբ: Ինչ վերաբերում է այն դեպքին, երբ դատարանը, միջնորդությունը մասնակի բավարարելով, որպես առավել մեղմ տեսակի խափանման միջոց կնշանակի վարչական հսկողությունը, ապա այդ դեպքում արդեն դատարանը ինքն է որոշում կիրառվող խափանման միջոցի կոնկրետ պայմանները մեղադրյալի նկատմամբ, քանի որ, փաստորեն, քննիչի կողմից նման խափանման միջոց կիրառելու միջնորդությունը բացակայում է, և դատարանը հանգում է հետևության, որ մեղադրյալի օրինական վարքագիծը հնարավոր է ապահովել առավել մեղմ խափանման միջոցի կիրառմամբ: Հետևաբար, այդ դեպքում դատարանը ինքը պետք է որոշի, թե նշանակվող խափանման միջոցը ինչ պայմանների ամբողջությամբ կարող է ապահովել մեղադրյալի իրավաչափ վարքագիծը: Ներկայացված դիրքորոշման հիմնավորվածության մասին է վկայում նաև 288-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝ եթե դատարանը կայացնում է միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում, ապա դրանում հստակ նշում է կիրառվող խափանման միջոցի տեսակը և *պայմանները*:

Իրավիճակը մի փոքր այլ է այն դեպքում, երբ քննիչը միջնորդություն կներկայացնի վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու մասին և միջնորդությամբ դատարանից չպահանջի վարչական հսկողության բովանդակությունը կազմող հիմնական պարտականությունից բացի մեղադրյալի վրա դնել նաև Օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լրացուցիչ արգելքները կամ դրանց մի մասը: Նման պարագայում անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք դատարանը կարող է դուրս գալ քննիչի միջնորդության սահմաններից և քննիչի միջնորդությունը բավարարելով, բացի միջնորդությամբ ակնկալվող արգելքներից, սահմանել նաև այլ արգելքներ, որոնք թեև առկա են Օրենսգրքի 124 հոդվածի 2-րդ մասում, սակայն քննիչի կողմից միջնորդության մեջ չեն ներառվել: Այս իրավիճակում հարկ է ընդգծել, որ դատարանը կայացնում է քննիչի միջնորդությունը բավարարելու մասին որոշում: Այսպես, Օրենսգրքի 288-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը կայացնում է քննիչի կողմից ներկայացված խափանման միջոց նշանակելու մասին միջնորդությունը բավարարելու մասին որոշում, եթե հանգում է հետևության, որ մեղադրանքի կողմը սույն օրենսգրքով սահմանված կարգով պատշաճորեն հիմնավորել է միջնորդվող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտությունը և իրավաչափությունը *միջնորդված պայմաններով*: Այստեղ հատկանշական է օրենսդրի կողմից սահմանված այն կանոնը, որ դատարանը բավարարման մասին որոշումը կայացնելիս այն բավարարում է քննիչի կողմից *միջնորդված պայմաններով*: Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 285-րդ հոդվածը, սահմանելով քննիչի կողմից դատարան ներկայացվող միջնորդությանը ներկայացվող պայմանները, ի թիվս այլնի նշում է, որ միջնորդությունը պետք է պարունակի միջնորդվող խափանման միջոցի *պայմանները*:

Այսպես, Օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասը իր հերթին խափանման միջոց կիրառելու միջնորդությամբ անցկացվող դատալսումների վերաբերյալ սահմանում է, որ դրանք իրականացվում են կողմերի *հավասարության և մրցակցության* հիման վրա, քննիչի և մեղադրյալի պարտադիր մասնակցությամբ: Միաժամանակ, նույն

հողվածի 7-րդ մասի համաձայն խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդությամբ դատախոսների կարգի նկատմամբ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառվում են սույն օրենսգրքի 8-րդ բաժնի դրույթները (դատական վարույթի ընդհանուր պայմանները): Վերոշարադրյալ կարգավորումներից հետևում է, որ օրենսդիրը խափանման միջոցի կիրառման վերաբերյալ դատախոսներին ևս ներկայացնում է մրցակցության և հավասարության սկզբունքի պահպանմամբ իրականացնելու պահանջ: Նման պահանջը բխում է նաև ՄԻԵ Կոնվենցիայից և ՄԻԵ Ղատարանի մի շարք նախադեպերում ամրագրված դիրքորոշումներից¹:

Քրեական արդարադատության ոլորտում տեսականորեն մրցակցությունն ընկալվում է որպես դատավարության կատարյալ մոդել, որտեղ հավասար կողմերի վեճը լուծում է անկախ դատարանը: Օրենսդրական մակարդակում այն դիտվում է որպես քրեական դատավարության առանցքային սկզբունք, որը բնութագրվում է երեք հիմնական տարրերով՝ մեղադրանքի, պաշտպանության և արդարադատության գործառնությունների տարանջատում, իրենց գործառնություններն իրականացնելիս կողմերի դատավարական իրավահավասարություն և *անկախ ու անկողմնակալ դատարանի առկայություն*²: Մեր կարծիքով, տվյալ դեպքում հիմքում ունենալով դատական քննության ընդհանուր պայմանների՝ վերաբերելի մասով կիրառելի լինելու մասին Օրենսգրքի 287-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը՝ վերը նկարագրված իրավիճակում դատարանը իրավասու չէ դուրս գալու քննիչի ներկայացրած միջնորդության սահմաններից և վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելիս սահմանի այնպիսի լրացուցիչ արգելք, որը քննիչի կողմից չի միջնորդվել: Այդ դեպքում գտնում ենք, որ եթե դատարանը դատական քննության սահմաններից դուրս գալու համանմանությամբ³ դուրս գա քննիչի կողմից ներկայացված միջնորդության սահմաններից և սահմանի լրացուցիչ արգելք, ապա դատարանը կիրականացնի քրեական հետապնդման գործառնությ՝ այդպիսով խախտելով մրցակցության, կողմերի հավասարության սկզբունքները, ինչպես նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքը:

АДМИНИСТРАТИВНЫЙ КОНТРОЛЬ КАК АЛЬТЕРНАТИВНАЯ МЕРА ПРЕСЕЧЕНИЯ

Грант Джилавян

Аспирант кафедры уголовного процесса

и криминалистики ЕГУ,

Начальник Департамента по защите прав человека в уголовной

юстиции и вооруженных силах аппарата Защитника прав человека РА

В рамках данной статьи рассмотрен новый вид меры пресечения, предусмотренный новым УПК РА - административный контроль. Указано на необходимость и обоснованность введения указанной меры пресечения, ее место в общей системе мер пресечения. Кроме того, в рамках статьи рассматриваются ус-

¹ St' u, օրինակ, PELLADOAN v. NETHERLANDS, 1994 թ. սեպտեմբերի 22, գանգատ թիվ 16737/90, կետ 41, OCALAN v. TURKEY, 2003 թ. մարտի 12, գանգատ թիվ 46221/99, կետ 166, GARCIA ALVA v. GERMANY, 2001 թ. փետրվարի 13, գանգատ թիվ 23541/94, կետ 39, LIETZOW v. GERMANY, 2001 թ. փետրվարի 13, գանգատ թիվ 24479/94, կետ 44:

² Տես ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 2, էջ 327, Երևան 2013:

³ Տես ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը Ա. Բաբայանի և Ս. Թումանյանի վերաբերյալ գործով:

ловия применения данной меры пресечения, ограничения прав лица, предусмотренные в результате ее применения, их характер, а также проблемы применения административного контроля.

ADMINISTRATIVE CONTROL AS AN ALTERNATIVE PREVENTIVE MEASURE

Hrant Jilavyan

*PHD Student at the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,
Head of General Department Human Rightsprotection in
the for Criminal Justice and Armed Forces*

Within the framework of this article, a new type of preventive measure provided for by the new Code of Criminal Procedure - Administrative control -has been discussed. Reference was made to the necessity and justification of the introduction of the mentioned preventive measure, its place in the general preventive measure system. In addition, within the framework of the article, the conditions of the application of this preventive measure, the limitations of the rights of the person envisaged as a result of its application, their nature, as well as the problems of the application of administrative control were discussed.

Բանալի բառեր – վարչական հսկողություն, այլընտրանքային խափանման միջոց, արգելքներ և սահմանափակումներ, էլեկտրոնային հսկողություն

Ключевые слова: административный контроль, альтернативная мера пресечения, запреты и ограничения, электронный контроль.

Key words: administrative control, alternative preventive measure, prohibitions and restrictions, electronic monitoring.